ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
16.06.2021թ. N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/03» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «15» նոյեմբերի 2021թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պաշտոնակատար Խ. Ղազարյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մավշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Հովհաննիսյանի (ընկերության տնօրեն Մ. Մաթևոսյանի 12.10.2021թ. N 1 հրամանի հիման վրա) (այսուհետ՝ Կապալառու), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 16.06.2021թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/03» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ **2 658 858.5 (երկու միլիոն վեց հարյուր հիսունութ հազար ութ հարյուր հիսունութ դրամ հիսուն լումա)** ՀՀ դրամի չափով, որի շրջանակներում Պայմանագրի N 1 հավելվածով՝ ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇՎՈՎ նախատեսված աշխատանքներից կատարման նպատակով առանձնացվում են սույն համաձայնագրի հավելված N 1-ով սահմանված աշխատանքները:

1.2 Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 2-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրն ուժի մեջ մտնելը 28.10.2021թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև համաձայնագրի կնքվելը Կապալառուի կողմից կատարված աշխատանքի դիմաց վճարումն իրականացվում է Պայմանագիրը և համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.3. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը և հավելված N 2-ը հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Դատական դեպարտամենտ	***«Մավշին» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ Վայոց Ձորի մարզ, գ. Զառիթափ
Հ/Հ՝ 900011025757	Հ/Հ՝ 11813008834700
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 08911644
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
Ղեկավարի պաշտոնակատար Խ. Ղազարյան	Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ա. Հովհաննիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 15 » նոյեմբերի 2021թ. կնքված N 1 համաձայնագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Չափաբաժին 1. Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /համաձայն ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Եղեգնաձոր քաղաքի նստավայրի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների նախագծային փաստաթղթերի/

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի արժեքը /ՀՀ դրամ/	Ընդամենը /ՀՀ դրամ/
1	2	3	4	5	6
	Տանիք				
	Կառուցողական աշխատանքներ				
4	Ծածկույթի իրականացում երկշերտ իգոգամից /երկրորդ շերտը փայլաթիթեղով/	$մ^2$	566.100	3800.000	2151180.000
	ԸՆԴԱՄԵՆԸ				2151180.000
	Ընդհանուրը				**2151180.000**
	Չնախատեսված ծախսեր 3%				**64535.400**
	Ընդամենը				**2215715.4**
	ԱԱՀ 20%				**443143.1**
	Ընդամենը ամբողջը՝ ներառյալ ԱԱՀ-ն				**2658858.5**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դպրական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
Հ/Հ՝ 900011025757
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պաշտոնակատար՝ Ս. Դանիելյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Մավշին» ՍՊԸ
Հասցե՝ Վայոց Ձորի մարզ, գ. Զառիթափ
ՀՀ՝ 11813008834700
ՀՎՀՀ՝ 08911644
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ

Տնօրենի ժամանակավոր
պաշտոնակատար՝ Ա. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
« 15 » նոյեմբերի 2021թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 3
« 16 » հունիսի 2021 թ. կնքված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/03» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում		
			նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/507	Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /համաձայն ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Եղեգնաձոր քաղաքի նստավայրի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների նախագծային փաստաթղթերի/	2 658 858.5	2 658 858.5	**2 658 858.5**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դպրական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
Հ/Հ՝ 900011025757
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պաշտոնակատար՝ Ս. Ղանդարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Մավշին» ՍՊԸ
Հասցե՝ Վայոց Ձորի մարզ, գ. Զառիթափ
ՀՀ՝ 11813008834700
ՀՎՀՀ՝ 08911644
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ

Տնօրենի ժամանակավոր
պաշտոնակատար՝ Ա. Հովհաննիսյան

/ստորագրություն/